

ՂԵՒՈՆԴ ԱԼԻԾԱՆԸ ԵՒ ՀԱՅՈՑ ԵՐԳԵՐՆ ՈՒ ՀԱՒԱՏԱԼԻՔՆԵՐԸ

Հայ բանագիտական միտքը սկզբնաւորուում է ԺԹ դարի կէսերից, եւ դրա մէջ կարեւոր ներդրում ունեն Մխիթարեան միաբանները, որոնց մէջ առաջին հերթին՝ Ղեւոնդ Ալիշանը: 1843 թ. Վենետիկի «Բազմավէպ» հանդէսում լոյս է տեսնում «Ազգային երգերու եւ ուրիշ ականդներու վրայ» խորագրով մի անստորագիր յօդուած, ուր հեղինակը, առաջինը մեզանում, կոչ է անում Հայ մտաւորականներին՝ լրջօրէն ուշք դարձնել քանաւոր աւանդութեան վրայ, «որ բերնէ բերան անցնելով՝ ինչուան իր օրերը հասած են: Վասն զի ազգի մը պատմութիւնը, բնաւորութիւնները, սովորութիւնները, լեզուն ու լեզուին զանազան փոփոխութիւնները ոչ միայն գրաւոր պատմութիւններէ կ'իմացուին, հապա նաեւ ան գրաւոր յիշատակութիւններէն առաջ՝ անգիր աւանդութիւններով կը հաստատուին: <...> Փափաքելի բան է, որ մեր ազգայինք ալ, ուրիշ բարեկիրթ ազգաց պէս վառուէին ազգային աւանդութեանց սիրովը, ու ձեռքերնէն եկածին չափ, ջանային հաւաքել այնպիսի երգեր, անմեղ խաղեր, պատմութիւններ ու առակներ, ետքը ուրիշներուն ալ հաղորդէին՝ կամ առանձին տպագրութեամբ, եւ կամ ազգային օրագիրներէն մէկուն իրկելով»: Ապա յօդուածագիրը առաջ է բերում Վանի ժողովրդական երգի մի նմոյշ, տուն առ տուն քննում այն եւ եզրակացնում. «Ահա այսպիսի բանաստեղծութիւններն են, որ ազգին անարատ ու սկզբնական հանճարը կը հասկըցնեն մեզի»¹:

Կոչն ամբողջովին սոգորուած է ժամանակի եւրոպական, մասնաւորապէս գերմանական ռոմանտիզմի ընդերքում բարգա-

¹ «Բազմավէպ», N 21, Վենետիկ, 1843, էջ 332-334: Տե՛ս նաեւ ՂԱՆԱԼԱՆ-ԵԱՆ Ա., Դրուագներ հայ բանագիտութեամ պատմութեամ, Եր., ՀՍՍՀ ԳԱ. հրատ., 1985, էջ 12:

լաճող բանագիտական ուղղութիւնների, յատկապէս Յոհան Գոտֆրիդ Հերդերի եւ Գրիմմ եղբայրների ժողովրդական երգերի ու առհասարակ բանահիւսական աւանդութեան գնահատման ու արժեւորման գաղափարներով:

Մենք դիտմամբ ենք կանգ առնում այս կոչի վրայ, որպէսզի ցոյց տանք, թէ հայ բանագիտական մտքի սկզբնաւորման նախաշեմին առաջինը Վենետիկի Մխիթարեաններն էին, որոնք առաջնորդուելով եւրոպական գիտական մտքի գաղափարներով եւ հայ ժողովրդի ազգային մտաւոր զարթօնքի իրողութեամբ՝ առաջ էին քաշում հայ բանահիւսական յուշարձանների գրառման, հրատարակման եւ հետազոտման պատմամշակութաբանական անհրաժեշտութիւնը: Սա կարեւոր իրողութիւն է հայ բանագիտական մտքի պատմութեան մէջ, որ պէտք է յատուկ ընդգծուի: Կոչի հեղինակը, հաւանաբար, «Բազմավէպի» հիմնադիր խմբագիր Գաբրիէլ Վրդ. Այվազովսկին է, որն, ըստ երեւոյթին, ելնելով խմբագրի իր պաշտօնից, կոչը տպագրել է անստորագիր:

Կոչն անարձագանք չի մնում: «Բազմավէպի» 1845, 1847, 1850 թթ. համարներում, ինչպէս նաեւ արեւմտահայ ու արեւելահայ մամուլի տարբեր օրգաններում սկսում են յաջորդաբար լոյս տեսնել «Ռամկական առակաւոր խօսքեր», «հայախօս առածներ», ժողովրդական երգերի տարբեր նմոյշներ եւ այլն²: Կարեւորն այն է, որ Կոչի առաջին արձագանքողը եղաւ երիտասարդ ուսուցիչ Ղեւոնդ Ալիշանը: «Բազմավէպի» 1845 թ. N 7-ում (էջ 109-111) լոյս է տեսնում «Ռամկական երգեր» խորագրով նրա յօդուածը, որտեղ Կոչի ոգուն համապատասխան՝ նա գնահատում է ժողովրդական երգը՝ իբրեւ ազգային ոգու ձայն, ճիշտ այնպէս, ինչպէս Յոհ. Հերդերը: Հեղինակը գրում է. «Ռամկական երգը ազգային ոգւոյն մէկ ձայնն է, որ շատ հեղ ուրիշ կողմանէ մեռած կամ մարած ատենն ալ դեռ այսպիսի երգոց մէջ կենդանի կը մնայ, անոր համար՝ ազգային երգ ալ կ'ըսուի <...> Այսպիսի երգերը շատ անգամ աւելի լաւ կ'իմացընեն ազգին հանճարը, քան թէ ծանր գրուածքներ, եւ կը գտնուին անոնց մէջ անանկ սքանչելի զուրցուածք, որ միայն իրենց ռամկական

2 Տե՛ս ՂԱՆԱԼԱՆՆԱՆ Ա., նշ. աշխատութեան «Մատենագիտութիւն հայ բանահիւսութեան» բաժինը, էջ 215 եւ հտն.:

անունին համար հասարակ բան մը կը կարծուին, բայց նշմար-տութեամբ գերագոյն գրուածոց կարգը անցնելու են»: Ապա Ալիշանն առաջ է բերում «Ողբ կաքառու» («Նստեալ կայր ու լայր կաքառուկն» սկզբնատողով) միջնադարեան ժողովրդական երգը եւ շարունակում. «Կը համարձակիմ ըսելու, թէ աս երգս անոնցմէ մէկն է, որոնց վրայ չկըրնար մէկը բան մը աւելցընել կամ պակսեցընել, եւ կրնայ գեղեցիկ օրինակ մը ըլլալ նաեւ օտար ազգաց, միայն թէ հայերէնին քաղցրութիւնը կարելի ըլլայ պահուիլ, որ անկարելի է. եւ կարծեմ՝ աւելի վսեմ հայկական լեզուով ալ գրուած ըլլար նէ՛. նոյն աղուտութիւնը չէր ունենար»: Վերջում հեղինակը դիմում է «ուսումնասէր եւ ազգասէր ընթերցողներին»՝ գրառելու Հայաստանի տարբեր գաւառներում երգուող ժողովրդական երգերը, «վասնզի անոնցմէ կըրնան շատ մարգարիտներ ելլել, եւ թերեւս ատենով հայոց գրականութեան տաճարին մէջը պատուաւոր տեղ մը ունենալ» (ընդգծումներն մերն են՝ Ս.Յ.):

... 11

Այսպէս, տեսնում ենք, տակաւին հայ բանագիտական մտքի սկզբնաւորման շրջանում ազգային բանահիւսակական արգասիքներէ, մասնաւորապէս ժողովրդական երգերի գիտական եւ մշակութային արժէքաւորման առաջնեկներն են դառնում ոչ միայն Մխիթարեանները, այլեւ նրանցից մեծագոյնը՝ Ղեւոնդ Ալիշանը, որն իր յետագայ գործունէութեամբ դառնում է հայ ժողովրդագիտութեան նախակարապետներից մէկը:

Ալիշանն ինքը, սկսած 1840-ական թուականներից «Բագմավէպի» տարբեր համարներում տպագրում է մի շարք «ուսմական» երգեր, որոնց մէջ զգալի տեղ են գրաւում բուն ժողովրդական երգերը: Այս մտայնութեան իւրատեսակ արձագանքներն են դառնում 1852 թ. Վենետիկում հրատարակուած Ղեւոնդ Ալիշանի «Հայոց երգք ուսմականք» եւ Գէորգ Ախվերդեանի Մոսկուայում տպագրած «Գուսանք, Ա, Սայաթ-Նովա» ժողովածուները: Սրանք մեր միջնադարեան գուսանա-ժողովրդական եւ աշուղական երգերի անդրանիկ ժողովածուներն էին, որոնք իրենց բազմազմուտ կազմող-հեղինակների շնորհիւ դարձան դասական օրինակներ հայ բանասիրութեան պատմութեան մէջ:

Ալիշանն իր ժողովածուում էր ամփոփել Վենետիկի, Վիեննայի, Փարիզի, Լոնդոնի մատենադարաններում պահուող հայ միջնադարեան ձեռագրերից իր ձեռքով քաղած եւ ժօ դարում

բանաւոր աւանդութիւնից վկայուած մօտ երկու տասնեակ (Թուով 19) ժողովրդական կամ ժողովրդականացած երգեր, դրանց զուգակցել նաեւ նոյն երգերի իր իսկ կատարած անգլերէն թարգմանութիւնները, որով ոչ միայն մեր միջնադարեան եւ բուն ժողովրդական երգերի ընտրանին առաջին անգամ արժանանում էր առանձին հրատարակութեան, այլեւ, որ պատմականօրէն նոյնքան կարեւոր է, մեր հին ժողովրդական երգերի այդ ընտիր նմոյշները առաջին անգամ թարգմանուած էին եւրոպական մի քաղաքակիրթ լեզուով եւ դրուում թէ՛ ազգային, թէ՛ միջազգային գիտական լայն շրջանառութեան մէջ: Այս էր հիմնականում Ղ. Ալիշանի երգերի այս ժողովածուի պատմա-մշակութային արժէքը: Նշենք նաեւ, որ Ալիշանի այս ժողովածուով էր ի յայտ գալիս «Կռու՛նկ, ուստի՞ կու գաս» երգը, որը յետագայում ձեռք բերեց համազգային հռչակ ու հետաքրքրութիւն:

1893 թուականից «Բազմավէպի» էջերում շարունակաբար սկսում է հրատարակուել Ղ. Ալիշանի «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» աշխատութիւնը, որը 1895-ին ամփոփուում է մէկ առանձին գրքում եւ տպագրուում վենետիկում: Այս ինքնատիպ մենագրութիւնն արդիւնք էր հեղինակի՝ հայ միջնադարեան ձեռագիր ու տպագիր աղբիւրների, վիմագրութեան, տեղագրութեան, հնագիտական յուշարձանների, ժողովրդական հաւատալիքների երկարատեւ պրպտումների, որոնց հիման վրայ նա քաղել էր մեծաքանակ արժէքաւոր նիւթեր, ենթարկել գիտական կռու համակարգման եւ ժամանակի միջազգային կրօնագիտութեան մէջ ընդունուած մեթոդների համապատասխան՝ ենթարկել հետազօտութեան:

Աշխատութիւնը բաղկացած էր առաջաբանից, վերջաբանից եւ 13 գլուխներից, որոնց մէջ բանասէրի եւ պատմաբան-մշակութաբանի հմտութեամբ քննութեան էր առնուել հայ հեթանոսական հաւատալիքների, պաշտամունքի, դիցաբանութեան գրեթէ ամբողջական համակարգը:

Մինչեւ Ղ. Ալիշանի այս երկի հրատարակ գալը հայագիտութեան մէջ արդէն տպագրուել էին երկու ուսումնասիրութիւն՝ նուիրուած հայ հեթանոսական կրօնին ու հաւատալիքներին, մէկը՝ 1866-ին հրատարակուած Մ. Էմինի «Очерки религии и верований языческих армян», (նոյնի հայերէն թարգմանութիւնը «Հետազօտութիւնք ի վերայ հայկական հեթանոսութեան» վեր-

տառութեամբ, տպագրուած Արմաշում, 1877 թ.), միւսը՝ Կար. Կոստանեանի «Հայոց հեթանոսական կրօնը» (1889 թ.) աշխատութիւններն են: Երկուսն էլ, գիտական՝ տարբեր մակարդակներով, հին մատենագիրների հաղորդած տուեալների եւ համեմատական նիւթի հիման վրայ փորձում էին վերականգնել հեթանոսական Հայաստանի դիցարանը, այնտեղ մտնող աստուածութիւնների պաշտամունքով, կամ ակնարկային ձեւով ներկայացնել հայ հեթանոսական կրօնի բնոյթն ու ընդհանուր նկարագիրը: Երկու դէպքում էլ հետազոտութեան հիմնական առարկայ էր դարձել քրիստոնէութիւնից անմիջապէս առաջ Հայաստանում գոյութիւն ունեցած պաշտօնական կրօնական համակարգը:

Մինչդեռ Ալիշանի նպատակն ու ծրագիրը բոլորովին այլ էին: Նրա աշխատութեան խորագիրը՝ «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» արդէն իսկ վկայում է ազգաբանական հետազոտութիւնների այն լայն ու մեծապարփակ տեսադաշտը, որին ձեռնամուխ էր լինում բազմաբեղուն, փորձառու, իր հասուն տարիքն ապրող մեծավաստակ հայագէտը:

Հետազօտական այդ դաշտում առաջին հերթին ընդգրկուած էին քրիստոնէութիւնից տակաւին հազարամեակներ առաջ իր հոգեւոր կրօնաառասպելաբանական կեանքով ապրող հայկական ցեղերի նախնադարեան հաւատալիքների ու պաշտամունքների մեծածաւալ համակարգը՝ իր տարբեր դրսեւորումներով՝ տարրապաշտութեամբ, երկնային լուսատուների, բոյսերի, կենդանիների, լեռների ու քարերի, գետերի ու աղբիւրների, բարի ու չար ոգիների, աստուածային հերոս-նախնիների պաշտամունքներով, նախնադարեան կրօնապաշտամունքային ձեւերով հմայութեամբ, գուշակութեամբ, ախտարային հաւատալիքներով, հանդերձեալ կեանքի նկատմամբ ունեցած նախնական ու յետագայ պատկերացումներով: Երկրորդաբար քննութեան էին առնուած հայոց ուշ շրջանի դիցարանը՝ առանձին աստուածութիւններով, նրանց պաշտամունքատեղիներով, պաշտամունքային հասկացութիւններով, ինչպէս նաեւ դրանց վրայ խոր ազդեցութիւն թողած իրանի մագդեզական կրօնական համակարգը իր հաւատալիքներով ու պատկերացումներով: Այլ կերպ ասած՝ Ալիշանը առաջինը մեզանում ազգաբանական հետազոտութեան է ենթարկում հայոց նախաքրիստոնէական ժամանակների հաւատալիքների, դիցաբանութեան եւ կրօնական պաշտամունքների ամ-

բողջական համակարգը, որն աննախադէպ երեւոյթ էր հայագիտութեան պատմութեան մէջ:

Երկրորդ. Ալիշանը՝ ելնելով ժամանակի ընդհանուր ազգաբանութեան տեսական սկզբունքներից, գիտական կայուն դասակարգման էր ենթարկում հայոց նախնադարեան կրօնական հաւատալիքներն ու պաշտամունքը՝ սկսած բնութեան առարկաներից ու երեւոյթներից, վերջացրած քրիստոնէութեանը նախորդած ժամանակաշրջանի Հայաստանում ընդունուած պաշտօնական կրօնով, դիցաբանով, պաշտամունքատեղերով ու պաշտամունքով:

Երրորդ. Հայ մատենագրական եւ հնախօսական աղբիւրներից քաղած բազմաքանակ ու տարբերոյթ նիւթերը հեղինակը համադրել է արեւելեան ու արեւմտեան տարբեր, յատկապէս հնդեւրոպական ժողովուրդների կրօնա-հաւատալիքային եւ դիցաբանական համանման տուեալների հետ, փորձել համեմատաբանութեամբ պարզել հայկական նիւթի կրօնահաւատալիքային խորքերն ու ընդհանրութիւնները, միաժամանակ ցոյց տալ հայոց հաւատալիքների ու պաշտամունքի իւրայատկութիւնները:

Չորրորդ. Իր այս ազգաբանական մեծարդիւն արժանիքներից բացի, Ղ. Ալիշանի քննարկուող աշխատութիւնն ունեցել է եւ ցարդ ունի աղբիւրագիտական բացառիկ արժէք: Հեղինակը մեղուի ջանասիրութեամբ հայ եւ այլալեզու մատենագրական ու հնախօսական տարբեր աղբիւրներից քաղել էր հետազօտական ու համեմատաբանական հսկայածաւալ նիւթ, որի մի զգալի մասը քաղուած էր հայ միջնադարեան ձեռագրերից, սակայն առանց աղբիւրագիտական յղումների: Ի հարկէ, Ալիշանի այդ աշխատութեան լոյս տեսնելուց յետոյ, վերջին հարիւրամեակում միջնադարեան շատ ձեռագրեր են յայտնաբերուել ու հրատարակուել, կազմուել ու տպագրուել են տարբեր վայրերում պահուող հայերէն ձեռագրերի ցուցակներ ու յիշատակարաններ, որոշ չափով ի յայտ են եկել Ալիշանի օգտագործած ձեռագիր աղբիւրները, այդուհանդերձ դեռեւս կան Ալիշանի յիշատակած այնպիսի ձեռագրական տուեալներ, որոնց աղբիւրները տակաւին պարզուած չեն:

Այս իմաստով Ալիշանի սոյն աշխատութիւնն առանձին դէպքերում ձեռք է բերում հետազօտուող նիւթի սկզբնաղբիւրի արժէք: Եւ ոչ միայն այդ առումով. Ալիշանի սոյն երկասիրու-

Թիւնն այնքան փաստաշատ է, բերուած փաստերն ու տուեալներն՝ այնքան ճշգրիտ ու արժանաւստահ, ենթարկուած գիտական այնպիսի կայուն համակարգման, որ հայոց հին հոգեւոր մշակոյթի, մանաւանդ հաւատալիքների, դիցաբանութեան, պաշտամունքի յետագայ եւ արդի հետազոտողները բնաւ չեն կարող շրջանցել այդ աշխատութիւնը, եւ նրանց ու գալիք սերունդների համար Ալիշանի այդ երկը եղել է ու կը մնայ այդ բնագաւառի ամենադասական ու արժանահաւատ աղբիւրը:

Ի հարկէ, Ալիշանի «Հին հաւատքը» իր ժամանակի, այն է՝ ժԹ դարի երկրորդ կէսի գիտութեան զարգացման մակարդակի եւ մանաւանդ հեղինակի պատկանած կրօնական դասի մտքի արդիւնքն էր՝ իրեն բնորոշ թերութիւններով:

Այդ ժամանակի հայագիտութեան որոշ ճիւղեր, մանաւանդ համեմատական լեզուաբանութիւնը, համեմատական կրօնագիտութիւնն ու առասպելաբանութիւնը տակաւին նոր էին ձեւաւորուում եւ իրենց սկզբնաքայլերը կատարում, եւ հայագիտական շատ խնդիրներ (հայերէն բառերի, անունների ստուգաբանութիւններ, կրօնաառասպելաբանական իրողութիւնների ու հասկացութիւնների գիտական մեկնաբանութիւններ եւ այլն) դեռեւս չէին լուծուած, եւ Ալիշանի այդ ուղղութեամբ կատարուած քննութիւններից շատերը թէպէտ էին եւ յաճախ հեռու գիտական ճշմարտութիւնից: Բացի այդ, հեղինակը լինելով հոգեւորական եւ խիստ բարեպաշտ քրիստոնեայ՝ այսպէս ասած, «ճշմարիտ կրօնի» հայեցակէտից էր դիտում եւ արժեւորում հին հեթանոսական հաւատալիքների ու պաշտամունքի փաստերը եւ յաճախ իր արհամարհական վերաբերմունքն էր արտայայտում դրանց նկատմամբ:

Ահա ինչ է գրում նա իր գրքի երկրորդ գլխի վերջում. «Այլ ո՛րչափ պժգալի է ողջախոհ քրիստոնէի՝ թողլով ստոյգ աստուածապաշտութեան յիշատակները, դառնալ ի հնացեալ եւ մոռացեալ նախնեաց՝ ցնորից, ախտից, կրից եւ տգիտութեան, եւ ստեղծած կամ կարծած սնտոիքը փնտոել...»: Իսկ գրքի վերջում յիշատակելով Քրիստոսին ու Ս. Գրիգոր Լուսաւորչին, փառք է տալիս նրանց, «որ այսպիսի յիշատակաւ՝ քաւեմ գրիչս, ասանկ խափանուած եւ խափանելի իրաց վրայ գրելէն» (էջ 475):

Այսուհանդերձ, Ալիշանի այդ աշխատութիւնը իր հիմնական արժանիքներով՝ հայկական հին հաւատալիքների, կրօնի, պաշտամունքների համակարգման ու հետազօտման բնագաւառում առաջին լուրջ ու ամբողջական եւ ցարդ չգերազանցուած աշխատութիւնն է, որը միշտ մնալու է հայագիտական մտքի պատմութեան մէջ իբրեւ դասական օրինակ:

ՍԱՐԳԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ